

Շրջակա միջավայրի նախարարության  
գլխավոր քարտուղար  
պարոն Սերգո Աթանեսյանին

## **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու  
Անահիտ Ալեքսանդրյանի 2023թ. դեկտեմբերի 4-ից 7-ը Չեխիայի  
Հանրապետություն գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Անահիտ Ալեքսանդրյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Չեխիայի Հանրապետություն (ք. Բոնո)  
2023թ. դեկտեմբերի 4-ից 7-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Չեխիայի Ստոկիոլմի կոնվենցիայի տարածաշրջանային կենտրոն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն «Նոր ԿՕԱ-ների գույքագրում» Մաս II. Ֆտոր պարունակող ԿՕԱ-ներ և այլ արդյունաբերական ԿՕԱ-ներ և իրականացման ազգային ծրագրի (NIP) նոր ձևաչափը» թեմայով դասընթացին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

2023 թվականի դեկտեմբերի 5-6-ը Բոնոյում (Չեխիայի Հանրապետություն) մասնակցել եմ «Նոր ԿՕԱ-ների գույքագրում» Մաս II. Ֆտոր պարունակող ԿՕԱ-ներ և



այլ արդյունաբերական ԿՕԱ-ներ և Իրականացման ազգային ծրագրի (NIP) նոր ձևաչափը» թեմայով դասընթացին:

Այս դասընթացը պատրաստվել է Չեխիայի Ստոկհոլմի կոնվենցիայի տարածաշրջանային կենտրոնի կողմից, որի ընդունող կողմն է հանդիսանում RECETOX-ը, Մասարիկի համալսարան՝ Իրականացման ազգային պլանների/NIP թարմացման գլոբալ ծրագրի (GEF ID 10785) և համապատասխան արբանյակային ծրագրի (GEF ID 10924) շրջանակներում, որն իրականացվում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում (Ալբանիա, Հայաստան, Բոսնիա և Հերցեգովինա, Վրաստան, Ղազախստան, Չեռնոգորիա և Հյուսիսային Մակեդոնիա)՝ շահառու երկրներում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացումն ուժեղացնելու նպատակով:

Դասընթացի նպատակն էր.

- տրամադրել տեղեկատվություն ֆտորացված ԿՕԱ-ների և նոր արդյունաբերական ԿՕԱ-ների բնութագրերի և օգտագործման վերաբերյալ, ներառյալ այն ոլորտները, որտեղ կարող են հայտնաբերվել այդպիսի քիմիական նյութեր,

- ցույց տալ Ստոկհոլմի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները՝ կապված նոր ԿՕԱ-ների կառավարման և հատուկ բացառությունների հնարավորության հետ,

- ցույց տալ, թե որտեղ կարելի է տեղեկատվություն փնտրել կենսացիկլի ընթացքում՝ արտադրություն, ներմուծում, արտադրանքի արտադրություն, օգտագործում, նոր ներառված ԿՕԱ-ների և հարակից ապրանքների/արտադրանքի կենսացիկլի ավարտից հետո մշակում, ինչպես նաև բացահայտել նոր ԿՕԱ-պեստիցիդներով պոտենցիալ աղտոտված կամ աղտոտված տարածքները,

- օգտագործել տարածաշրջանի նախորդ ծրագրերից քաղած դասերը և թեմատիկ ուսումնասիրությունները՝ ցույց տալու համար, թե ինչպես իրականացնել հիմնական գույքագրումը և I մակարդակից III մակարդակի գույքագրմանն անցնել, որտեղ հնարավոր է, գործնական եղանակով,

- տեղեկություններ փոխանակել հետևյալի մասին.

- ազգային տեղեկատվության հավաքագրման գործընթաց, ներառյալ հիմնական շահագրգիռ կողմերի խմբերի բացահայտումը և համագործակցությունը,

- յուրաքանչյուր երկրում նոր ԿՕԱ-ների ազգային ինստիտուցիոնալ և իրավական հենք (երկրների ներկայացուցիչների կարճ ներկայացումներ),

- քաղված դասեր այլընտրանքների վերաբերյալ՝ ապրանքներ, մեթոդներ և ռազմավարություններ՝ ՊՖՕՍ/ՊՖՕԹ-ը և նոր արդյունաբերական քիմիական նյութերը հայտնաբերելու և դրանցից աստիճանաբար հրաժարվելու համար,

- ՊՖՕՍ/ՊՖՕԹ-ով և ցանկում ներառված նոր արդյունաբերական քիմիական նյութերով պոտենցիալ աղտոտված վայրերի բացահայտում:

Դասընթացի ընթացքում ներկայացվեցին հետևյալ զեկույցները.

- ֆտոր պարունակող ԿՕԱ-ների՝ պեր- և պոլիֆտորալկիլ նյութերի (PFAS) ֆիզիկաքիմիական հատկությունները և գիտական հետազոտությունների ձեռքբերումներ,

- Ստոկհոլմի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները՝ կապված նոր ԿՕԱ-ների կարգավորման և ֆտորացված ԿՕԱ-ների (Մաս I)՝ պերֆտորոկտանային


սուլֆոնիլֆտորիդ (PFOS), պերֆտորոկտանաթթու (PFOA), պերֆտորհեքսանսուլֆոն (PFHxS), հատուկ բացառությունների հնարավորությունների հետ:

Ես ներկայացրեցի «Ցանկում ներառված նոր քիմիական նյութերի վերաբերյալ ազգային տեղեկատվության վերանայում. ֆտորացված ԿՕԱ-ներին և արդյունաբերական ԿՕԱ-ներին վերաբերող իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմներ» թեմայով զեկույց:

## 7. ԱՐԴՅՈՒՆՔԸ

Որոշվեց պարբերաբար փոխանակել ԿՕԱ-ների գույքագրման տվյալները տարածաշրջանային ծրագրին մասնակցող երկրների միջև:

Իրավախորհրդատու՝



Ա. Ալեքսանդրյան